



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՈՒՂԵՑՈՅՑ

# ԸՆԻ ՔԱՂԱՔԻ

Ե Ի

ՇՐՋԱԿԱՅ ԱՌԵՐԱԿԱՅ

(ՃԱՆԱԳՐՔՈՐԳՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

Գ ր Ե ց

Ա. Գ. Է. ՄԵԹՈՒՐԵԱՆՅԱՆ

ԱԼԷՔՍԱՆԳՐԱԳՈՒ.

Արազիսիպ-Տարսան Ա. Մ. Մալխասեանցի

1902

902.6

Մ-79

50

1871

1872

1873

1874

19090

Հիշատակ


OCT 2011

50

309.6  
U-79  
~w

ՈՒՂԵՑՈՅՑ

# ԱՆԻ ԲԱՂԱԲԻ



ՇՐՋԱԿԱՅ ԱԻԵՐԱԿԱՅ

(ԺՈՆԱԳՐՔՈՐԻՆԵՐԻ ՀՈՄԱՐ)



1008  
35277  
9

Գ Ր Է Գ  
Ա. Գ. Է. Բ. ՄԵԻՔԱՐԵԱՆՑ

ԱՆԷՔՈՆՏԻՐԱԳՈՒ  
Արագածիպ-Տպարան Ա. Մ. Մալխասեանցի

1902

02.07.2013

Дозволено цензурою, 11 Апрелья 1902 г. Гор. Тифлисъ.



Ի Ի Ր Բ Ա Ջ Մ Ե Ր Ա Ն Տ

Ծ Ն Ո Ղ Ն Ե Ր Ի

Ա Ն Մ Ո Ռ Ա Յ Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

Ը Ղ Ջ Ա Կ Ս Ա Ր Ս Ի Տ Ի

Ն Ո Ի Է Ր

Ե Ր Ը Խ Տ Ա Ղ Ա Ր Տ Ո Ր Գ Ո Ւ Յ

Իբրև Ալէքսանդրապօլցի, 1878 թուից մինչև այսօր, ամեն տարի, գարնանից սկսած մինչև խոր աշուն, ամեն դասակարգի, սեռի ու հասակի բազմաթիւ ճանապարհորդներ եմ տեսած, որոնք գալով Ալէքսանդրապօլ, ուզում են գնալ Անին տեսնելու, բայց այլ և այլ դժուարութիւնների են հանդիպում: Նախ՝ որ առանց հրամատ ուղեցոյցի դժուարանում են գնալ, և երկրորդ՝ եթէ մի կերպ գնացին էլ, այնտեղ — հէնց Անուոյ մէջը, մէկը պիտի լինի, որ մի առ մի մատնացոյց անէ նրանց կիսակործան բեկորների և նշխարների մնացած հետքերի հետ: Թող ներուի մեզ նկատել, որ Անուոյ պահապան վանահայրերն էլ, գոնէ մեր տեսածները, այնքան են ուսումնասիրած Անիի հնութիւնները, նրանց պատմութիւնը, և նուիրուած իրանց պարտականութեանը, որ իրանց առաջնորդութեանը դիմող և կարօտ այցելուին, չեն կարող լիովի բաւականութիւն տալ, որովհետև իրանք էլ իսկապէս չը գիտեն, թէ որը որոց է:

Այս ամենը ինկատի առնելով և գիտենալով, որ անձանօթ այցելուին մի ուղեցոյց կամ հմուտ

առաջնորդ հարկաւոր է, մի քանի անգամ այս ու  
այն մեծամեծ և գիտնական ճանապարհորդների  
հետ Անիին այցելելուց և մանրակրկիտ կերպով  
զննելուց յետոյ, պարտք համարեցի սոյն գործ-  
նական ձեռնարկը կամ ուղեցույցը կազմել, իբրև  
առաջնորդ, Անիին նոր ու անծանօթ այցելողների  
համար, որպէս զի մեծամեծ դժուարութիւնների  
չը հանգիպին թէ ճանապարհին և թէ Անուոյ  
մէջ: Հէնց այդ պատճառով էլ Ալէքսանդրապօլից  
մինչև Անի, մենք չորս որոշ ճանապարհ ցոյց  
կտանք. և այնուհետև Անուոյ տեղագրութեան  
մէջ մի առ մի անուանով մատնանիշ կանենք, թէ  
որ աւերակը կամ նշխարը ինչ գծի վերայ է  
գտնվում, աջ՝ թէ ձախ:—Որպէս զի Անիին այ-  
ցելողները բոլորովին զրկուած չըմնան նրա մօտ  
գտնուած մի երկու նշանաւոր աւերակներից էլ,  
որոնք իրանց անցեալ փառքով նոյնքան նշա-  
նաւոր են, որքան Անին, անբաժան սոյն տեղա-  
գրութիւնից, կը դնենք իւր տեղում «Ղօշա-  
վանքի»—«Մաղաքերգի» և «Ղօզլիճայի» (հին  
Բագնայրի) աւերակների և եկեղեցեաց ու այլ  
նշխարների տեղագրութիւնն էլ, որով լրիւ ամ-  
բողջացրած կը լինինք Անիի ուղեցույցը և կտանք  
մեր յարգելի ճանապարհորդներին օգտուելու,

Բացի մի համառօտ տեսութիւնից, բոլորո-  
վին մեր նպատակից դուրս է երկար ու բարակ  
պատմական հետազօտութեանց և մանրամասն

նկարագրութեանց յետևից ընկնելը. քանի որ  
մենք ճանապարհորդին ոչ թէ պէտքէ զբա-  
ղեցնենք մանրամասնութիւններով, այլ ինչպէս  
յիշեցինք, նրան առաջնորդել Անի և եղած հնու-  
թիւնների նշխարների հետ ծանօթացնել:

ԱՂԷՔ. ՄԻԻԹԱՐԵՆՆԹ.





**ԱՆԻ ԲԱՂԱԲԻ ԱՒԵՐԱԿԱՅ**

I

Հանրանոս պատմական տեսարիւնի ակնարկ



ախքան մեր ուղի ընկնելն ու  
այցելուին առաջնորդելը  
դէպի Անի, մի հարև-  
անցի ականարկ ձգենք ու  
մի համառօտ տեսու-  
թիւն անենք այդ ող-  
բալի և կիւսքանդ աւե-  
րակների անցեալի վերայ՝



ապա շարունակենք մեր ուղիղ ճանապարհը:

Անիի սկզբնաւորութիւնը և կամ ուժ ձեռքով հիմնարկուելը խոր ու մթին անյայտութեան մէջ է թաղուած եւ թանձր վարագուրով ծածկուած. որովհետեւ մեր նախնի հոգելոյս Մատենագիրները այս մասին լռութիւն են պահպանում և նրանցից ոչ ոք այդ մասին մի որոշ բան չի ասում:

Մինչև Չորրորդ դարի առաջին քառորդում, այն է 325 թուին, Անին յայտնի էր իբրև մի սոսկական հասարակ բերդ, որը Մեծն Տրդատ մի յայտնի դէպքի առթիւ—Շիրակ գաւառի հետ միասին, ընծայեց իւր ազգական Կամսարական սեպուհներին, որոց ձեռքում մնաց մինչև Աթենքի Գորդ դարի սկիզբները:

Այնուհետև Արշակունեաց պանծալի թագաւորութեան անկումից յետոյ, Բագրատունի թագագիր իշխանները— երկու հարազատներ— Աշոտ և Շապուհ սպտուելով Կամսարականների անցուցած գեղի ու շուշլ կենցաղավարութիւնից, ամբողջ Շիրակ գաւառը, ընդ նմին և Անի ամրոցը, փողով գնեցին նրանցից, և այնուհետև երկրի այդ մասը սեփականութիւն դարձաւ հարուստ Բագրատունեաց:

Բագրատունիք տէր դառնալով արգաւանդահող ու բերրի Շիրակին, իրանց իշխանական աթոռը գծուծ Կոզովիտից փոխադրեցին «Շիրակ»

— ան, կամ «Շիրակ» (այժմ Բաշ—Շորակեալ.) որը հիմնարկեց Սմբատ Ա. և իւրաշէն Ս. Փրկիչ եկեղեցում 897 թուին Գառնեցի Գէորգ Կաթողիկոսի ձեռքով օծուեցաւ առաջին Բագրատունի թագակիր թագաւոր:

Համարեա Իններորդ դարի կիսից սկսած, այն է—964—980 թուականներին Աշոտ Գ. ի և նորարժանաւոր Ժառանգ Սմբատ Բ. Տիեզերակալի օրով, որը հիմնարկեց Անույ ներքին պարիսպները և Կաթողիկէ եկեղեցին, Անին սկսում է օրըստօրէ կամաց կամաց իւր անշուք դրութիւնից դուրս գալ ու բարձրանալ և մտնել թագաւորանիստ պերճաշուք մայրաքաղաքների շարքը:

Հետզհետէ սկսում է քաջահամբաւ նոր տիրողների ձեռքով ու շնորհիւ—նորանոր վայելչակերտ շէնքերով, բարձրաբերձ եկեղեցիներով, ճոխ պալատներով, հսկայական պարիսպներով, վիթխարի բուրգերով ու աշտարակներով և առհասարակ հազար ու մի տեսակ հասարակաց փայլուն ու փարթամ շինուածքներով ընդարձակուել, վայելչանալ ու ճոխանալ:

Պատմութիւնից որքան լայտնի է, Անին հազիւ թէ մօտաւորապէս երկու դար, կամ մի քիչ աւելի, մնաց իւր պանծալի ճոխութեան ու փառաւորութեան մէջ, այն էլ ոչ առանց կողմնակի ընդհարումների ու խռովութեանց, որոնք միշտ անպակաս էին նրա գլխից: Կարծես

ճակատագիրն ու բողոքը այդպէս էին վճռել: Իսկ Գագիկ առաջինի մահից յետոյ, այն է 1020 թուականից սկսած, նրա երկուց որդուց—Յովհաննէս Սմբատի և Սշոտի—իրանց հօր գահը ժառանգելու համար, մէջները գժտութիւններ ու խռովութիւններ ծագեցան. որի պատճառաւ օտարները չարմար առիթ համարելով, անուղղակի ճանապարհով սկսեցին ներս սողալ նրանց ներքին գործերի մէջ և խառնելով ու աղմկելով նրանց խաղաղ դրութիւնը, քսութեամբ երկպառակութիւն ու չար որոմ սերմանեցին այդ ընտանեկան անդորրութեան մէջ, իրանց ձեռքին գործիք ունենալով, հալ նախարարներից, իշխաններից և բարձրաստիճան կղերականներից ոմանց ապիրատ և մարդահաճոյ գործունէութիւնը. որը իրանց շահերին ու ապագայ նպատակներին խիստ ձեռնտու էր: Որից հետզհետէ առաջ եկաւ տնաքանդ խզումն ու քայքայումն այդ ամրապինդ թագաւորութեան հիմքը խախտելու և ապա թուլանալով՝ իսպառ կործանեցաւ:

Պատմութիւնից նոյնպէս ակներև յայտնի է, որ 1021 թուականին առաջին հարուածը մեր դրացի Վրացիք տուին Բագրատունեաց հարստութեանը: Իսկ այնուհետև շարունակաբար մէկը միւսի յետևից, մեծանուն և ճօխ ու փարթամ Անիին և առհասարակ Հայաստանին տիրելու անյազ տենչանքով ու փափագով տողո-

րուած, սկսեցին անխնայ հարուածել յոյներն ու Սկիւթացի թաթարները—Ալփասլան, Տուղրիլ, Փատլուն, Եսհարմէն, Չարմաղան և այլ չարանեղ բէգերն ու ամիրաները: Աւելացուր սրանց վրայ նա և ժամանակ առ ժամանակ բնութեան ձեռքով տուած ահեղ ու սոսկալի հարուածը, այն է երկրաշարժը, որ մի կողմից էլ սա էր, իւր հզօր զօրութեամբ, աւերիչ ձեռքերի պակաս թողածը լրացնում—աւերում, տակնուվրայ և քարուքանդ անում ու փլատակի վերայ նոր փլատակ բարդում ու դիզում: Վերջապէս երկար տարիների ընթացքում այսքան աւերածներ ու վէրքեր իւր կողուկշտին ընդունելուց յետոյ, թշուառ Անին 1319 թուականին անգարձ կերպով մի վերջին ու սարսափելի երկրաշարժի զոհ գնաց, իսպառ քարուքանդ լինելով: Որի տարաբաղբ բնակիչները այլ ևս չը կարողանալով տոկալ ու դիմանալ յաջորդաբար միմեանց հետևող, մարդկանց ու բնութեան հասցրած հարուածների, համարեա ամեն ինչ թշնամու ձեռքը աւար թողած, իրանք արտասուքն աչքերին, պանդխտութեան գաւազանը ձեռքերն առած, գաղթելով ցիրուցան եղան:

Ահա այս է, յարգոյ ընթերցող, այն՝ մի ժամանակ պերճ ու փայլուն մայրաքաղաքի, իսկ այժմ եղերական աւերակների համառօտ տեսութիւնը, որին պատրաստվում ես տեսութեան

գնալ: Այս է «Շիրակայ լայնատարած դաշտա-  
 վայրի մի անկիւնում իւր նախկին ծովացած,  
 ուռճացած անառիկ մարտկոցներով, բարձրա-  
 բերձ խրոխտ աշտարակներով, անմատչելի բուր-  
 գերով, հրաշակերտ և հոյակապ պալատներով  
 զարդարուած Անւոյ պատկերը, որի փոխանակ  
 այժմ պիտի տեսնես քարերի ահագին շեղջեր այս  
 ու այն կողմ խռնուած, ջարդուփշուր եղած  
 հսկայաձև և զարմանակերտ շինուածոց ահաւոր  
 կոյտեր, և դարերի ընթացքում մարդկանց ու  
 բնութեան կատաղութեան դէմ դեռ անսասան  
 կանգնած վեթիւարի պարիսպների, եկեղեցիների  
 և պալատների կիսաւեր մնացորդներ»:

II

**ՃԱՆԱԴԱՐՅՈՐԴՈՒԹԻՒՆ.**

Բագրատունեաց հարստութեան մայրաքաղաք  
 Անին, թէպէտ այլ և այլ կողմերից կարելի է գնալ,  
 ինչպէս Երևանից, Կաղզվանից, Կարսից և այլն.  
 բայց ամեն կերպ առաւելութիւն ունեցող ու  
 յարմարաւոր ճանապարհը Ալէքսանդրապոլից է.  
 որովհետև ճանապարհորդի համար անհրաժեշտ  
 պիտոյքներ—կառք, ձի, ընկերներ, առաջնորդներ  
 և ուտելու պաշարեղէն, իբրև կեդրոնավայր,  
 Ալէքսանդրապոլը միայն կարող է իւր յարմար-  
 աւոր գրութեամբ մատակարարել ճանապարհոր-

դին: Մանաւանդ Ալէքսանդրապոլից մինչև Անի,  
 մօտաւորապէս 40—45 վերստ, կամ ուրիշ խօս-  
 քով ստել, կ'ուրբ գնացքով 4—5 ժամու ճանա-  
 պարհը, շատ հարթավայր դաշտերի ու փոքրիկ  
 հովիտների միջով է գնում, որոնք շրջապատուած  
 են աջ ու ձախ կողմերից հետաքրքիր տեսարան-  
 ներով—լեռներով, սարահարթներով, լեռնադաշ-  
 տերով ու յայտնի բլուրներով, որոնց կողերի ու  
 բարձր գագաթների վերայ ակն յայտնի երևում  
 են Ռուս—Տաճկական անցեալ պատերազմներից  
 մնացած հին ու նոր խրոխտ մարտկոցները, որոնց  
 նայելիս մարդ մի տեսակ մռայլ սարսուռ է գգում  
 իւր մէջ: Բայց թողնենք այդ նկարագրութիւն-  
 ները, որ մեր նպատակից դուրս է, և ճանապար-  
 հորդին ուղիղ գծերով առաջնորդենք դէպի Անի,  
 որ մեր բուն նպատակակէտն է կազմում:

Ալէքսանդրապոլից Անի տանող երեք որոշ  
 գիծ կամ ճանապարհ կայ. (մի չորրորդն էլ նոր  
 է սկսվում, որի մասին իւր տեղում կը խօսենք.)  
 որոնց մենք առանձին առանձին ցոյց կտանք, որ-  
 պէս զի ճանապարհորդը, որ ճանապարհը որ իրան  
 յարմար տեսնի, այն գծով գնայ. որովհետև ան-  
 նշան բացառութիւնով (2—3 վերստ) հեռաւո-  
 րութեամբ տարբերութիւն ունին Անիից:

**ԱՌԱՋԻՆ ՃՆՆԵՊՈՐՀ:**— Ալէքսանդրապոլից կառ-  
 քը դուրս գալով դէպի հարաւ արևմուտք, Կար-  
 սի խճուղով գնում է երեք վերստաչափ և հաս-

նում Արփաշայի (Գարեգետի) կամսւրջին: Կամսւրջից մի փոքր շեղուելով դէպի հարաւ, ուղիղ գծով 4 վերստի վերայ, հասնում է թուրքաբնակ «Արաբիլի» գիւղին, որ դրուած է Արփաշայի աջ և Կարսի խճուղու ձախ, ափերին: Այդտեղից կառքը խճուղուց դուրս գալով (որովհետև խճուղու շարունակութիւնը մնում է դէպի արեւմուտք.) ճանապարհը ուղիղ գծով դարձեալ դէպի հարաւ շարունակուելով, հասնում է «Արաշլի» կոչուած թուրքաբնակ գիւղը, ուր մի հին եկեղեցու աւերակ կայ. որի աջ կողմից քերելով ու փոքր ինչ առաջ գնալով, այս անգամ ճանապարհը ծովում է դէպի արեւմուտք և «Արաբիսուրջ» կոչուած գետակն անցնելով, ուղղակի մըտնում է մի ժամանակ հռչակաւոր «Բաշ—Շորաիլ» կոչուած հայաբնակ մեծ գիւղը, որը մեր հին պատմագիրներից կոչվում էր „Երազսուր“ կամ «Շիրաիլ», որի արեւմտահիւսիսային եզերքին դրուած է Սմբատ Ա. կառուցած երկյարկ հսկայ և հոյակապ Ս. Փրկիչ եկեղեցին: Ետ ուրիշ պանծալի շինութիւնների հետ, որոնց կիսականգուն բեկորներից գեռ ևս մինչև այսօր նըշխարներ ու մնացորդներ կան, այս գիւղի շրջակայքումն էին գտնվում, նաև «ՇԻՐԱԿԱՏ» հռչակաւոր „ՇՄԻՐՆԵՐԸ“, որոնք շատակեր Եարայի և նրա անյագ որդուց ու թոռների հաց էին մատակարարում և հազիւ կերակրում այդ անկուշտ

սերունդին: Գեռ այսօր էլ այդ գիւղի հիւսիսային կողմի սարահարթի վերայ նշմարվում են կիսով չափ հողով ու քարով լցուած—մի քանի տասնեակ—այդ մեծահռչակ նախապատմական ամբարների հետքերից, որոնք յայտնի ապացոյց են Երաւի արգաւանդահող պողաբերութեան և հացի առատութեան:

Այստեղից ճանապարհը շարունակուելով մի նեղ հովտի միջով դէպի հարաւ արեւմուտք, հասնում է „Կարս չայի“ կամ „Սիւրբէնի“ ձախ եզերքին դրուած «Աղիւղ» հայաբնակ գիւղը, որի միւս—աջ—եզերքին հանդիպահայեաց կերպով դրուած է կանաչ տափարակի վերայ և համանուն թուրքաբնակ „Աղիւղ» գիւղը:

Գետն անցնելով և թուրքաբնակ Աղիւղում գիւղի առջևից (ձախ կողմից) ճանապարհը շարունակելով դէպի արեւմուտք, սկսում ենք կամաց կամաց բարձրանալ սարահարթի գագաթին, որի արեւմտեան եզերքին, զառիվայրի վերայ, դրուած է „Մարաշի—ըստ հնումն „Մարաշիլի“ կամ „Շիրաիլի“ գիւղը. որի աջ կողմում, հանդիպահայեաց բարձր դիրքի վերայ, նոյնպէս դրուած է „Կարաիլի Վան“ կոչուած գիւղը, որը կարծես անունն առել է իւր մէջ գտնուած գորշ կարմրագոյն խարոած քարերով շինած Մենաստանից, որին Հայր Ալիշանը իւր „Տեղագրութիւն Երաւկայ“ անուանուած գրքի մէջ, խախուտ հի-

մունքներից առած, անուանում է „Պարէզան“ . որը ըստ մեզ բաւականին անստոյգ կարծիք է, ըստորում մի այգպիսի խղճուկ ու փոքրիկ Մենաստանը կամ մատուռը, չէր կարող փոխարինել մեր հին պատմաբանի— «... բարեգարգ կարգադրութեամբ, բազմութեամբ եղբարց, բազմապայծառ բանական իմաստնովք...» (Ասողիկ եր. 175—176 փառաբանած և հաշակաւոր «Պարեւմանքին»։ Որովհետեւ, ինչպէս ասել ենք, ներկայիս մեր նպատակից դուրս է այգպիսի պատմական և քննական հետազոտութիւններով զբաղուելը, ուստի առ այժմ այգպիսի սխալների ուղղելը թողնում ենք ուրիշ յարմար ժամանակի և առիթի։

Մաւրակի գետակն անցնելով ու մի վերստաչափ փոքր ինչ զառիվեր ճանապարհ գնալով ուղիղ դէպի հարաւ, հասնում ենք „Իւլափալար“ կոչուած բլուրների, որոնցից երկուսը զուգահեռաբար ձախ և մէկը աջ թևին են գրուած եռոտանու ձևով, որոնք վերջին 1877 թուի Ռուս-Տաճկական պատերազմի ժամանակ, Ռուսական զօրաբաժինների համար հզօր ամրութիւնների տեղ էին ծառայում։ Հէնց այսօր էլ նրանց վերայ գտնուած մարտկոցներն ու խրամատները ահաւելի տպաւորութիւն են թողնում մարզի վերայ։ Ճանապարհորդին այնպէս է թըլում, որ իբր թէ ինքը պատերազմի բոլոր սարսափներով ու արհաւիրքներով շրջապատուած է։

Ուղիղ այդ գծով դէպի հարաւ, զառիվայր ճանապարհը շարունակելով և 3—4 վերստ գնալով, հասնում ենք Իւլափալարների ներքին ծայրը, ուր ճանապարհը մասնաւոր շեղումներով, բաժանվում է երեքի, որոնցից աջ կողմինը տանում է դէպի „Արալ“ գեղը, ձախ կողմինը դէպի „Տայար“ կոչուած, իւր ամուր գիրքով ու նշանաւոր հնութիւններով աւերակը, որից դէպի հարաւ 2—3 վերստաչափ հեռու գտնվում է «Հառաճի» կամ հաշակաւոր «Ղաշափանդ» ուր գտնւում է Ս. շոտ Ողորմածի և այլ թագաւորագանց շատ գերեզմաններ, մեծահաշակ Մենաստանի և այլ մատուռների ու շատ նշանաւոր հնութեանց հետ, որոնք բոլորը միասին գրուած են փրփրագէզ Ախուրեան գետի աջ ափի քարաժայռ բարձրաւանդակի վերայ. իսկ միջին ճանապարհը ուղիղ գծով շարունակուելով դէպի արեւմտահարաւ, զառիվայր իջնում է դէպի տափարակ դաշտահովիտը և մի շարք քարափների առջևից անցնելով կանգնում Անույ „Ա-Պ“ դրան հանգէպ, որի շարիշար պարիսպները, բուրգերն ու աշտարակները յակամայից մարզի աչքերից արտասուքի կաթիլներ են քամում, իրանց փայլուն անցեալը և տխուր ներկան մտաբերել տալով։

Ահա այս էր Ալեքսանդրապոլից դէպի Անի տանող առաջին անխտոր ճանապարհը, որով առանց դժուարութեանց հանդիպելու, ճանա-

պարհորդը անվտանգ կարող է ժամանել Անի:

### III

ԵՐԿՐՐՐՈՒԹ ՃՆՆԵՊՈՐՀ:—Առանց շեղուելու առաջին ճանապարհից, կառքը Ալէքսանդրապոլից դարձեալ սլանում հասնում է մինչև վերև յիշած թուրքաբնակ Ղարաքիլիսայ գիւղին: Իսկ այնտեղից դէպի արևմուտք Կարսի խճուղին շարունակելով, անցնում է «Ղարախան» գետակի վերայի մեծ կամուրջից եւ ուղիղ գծով հասնում նախնեաց «Մէծն Արգիւնայ» ասուած Աւանը, որ այժմ մի ողորմելի և գծուծ թուրքաբնակ գիւղ է: Որի հիւսիսային կողմում, 1877 թուի պատերազմից յետոյ, Ռուս ազանդաւոր «Իօթուր» կոչուած ցեղը, դէպի արևելահիւսիս, կէս վերստ հեռաւորութեան վերայ շինել—կառուցել է համանուն «Արգինայ» գիւղը:

Զընայելով այժմեան թշուառ դրութեանը, Արգինան իհնումն փառաւոր անցեալ ունեցող, Ախուրեան գետի ձախ ափին դրուած, նշանաւոր աւաններից մէկն էր, ուր հայրապետական գահի վերայ նստեցան երկու արեւակիցներ—Անանիայ և Խաչիկ—Կաթողիկոսները: Ուր ըստ պատմաբան Ա.սողկայ, գտնվում էր— «Տուն Կաթողիկոսարանին... և կաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք. հաստահեղոյս արձանօք, գմբե-

թարդ խորան երկնանման...» այժմ որի միայն հիւսիսային կիսափուլ պատը կայ:

Այս գիւղի մօտի կամուրջից Ախուրեան կամ Ռահ գետն անցնելով, ճանապարհը ուղիղ դէպի հարաւ 3—4 վերստ շարունակելով, հասնում ենք գետի ձախ ափին դրուած «Փերլալի» հայաբնակ գիւղը: Այդտեղից դարձեալ դէպի հարաւ տափարակ դաշտավայրի վերայով շարունակվում է ճանապարհը, աջ կողմին թողնելով «Ղարաղուր» լեռնաբլուրը, իւր աղիաղիտեալ «Ղարախուր» կոչուած լեռնաշղթայի հետ: Սրանց արևմակողմը— դաշտի միջին զոյգ—մեծ ու փոքր, բարձրակատար «Եհնիշախիլ» և հետզհետէ, առանց շեղուելու գծից, գնալով հասնում ենք «Ղարախուր» կոչուած մեծ լեռնաբլուրին, որը իւր յարմարաւոր և անմատչելի դիրքով մի նշանաւոր և անառիկ պատերազմական բերդի կամ մարտկոցի դիրք է ներկայացնում, և տարանջատ ու միայնակ կանգնած ընդարձակ դաշտահովտի միջին, առանց հաղորդակցութիւն ունենալու ուրիշ լեռների, գօտիների և բլուրների հետ, խրոխտաբար իշխում է բոլորի վերայ: Ահա այս ամբողջութեան շնորհիւ էր, որ Ռուսները 1877 թուի պատերազմի ժամանակ փառաւոր յաղթանակ տարան Մուխթար փաշայի սևագունդ բանակի դէմ, և բնաւեր թուշուրի նման նախ թուրքին «Ալաշախ» գագաթը, և ապա այնտեղից վանեցին ու հալածե-

ցին Կարսի պարիսպների տակ, ուր խեղճերը հազիւ մի քանի օր շունչ առան:

Սրանց հանդէպ—ձախ կողմը— ընկնում են վերև յիշուած «Իւլյաթափալար» կոչուած բլուրները, որոնց մասին իւր տեղում խօսել ենք:

Նոյն ուղղութեամբ առաջ գնալով և «Բայ-բախտ» գիւղի ձախ կողմից անցնելով, հասնում ենք «ձախ» կոչուած հայաբնակ մեծ գիւղին, որի հարաւ արևմտեան կողմում— դաշտի միջին— հսկայակերպ և վեհաբար կանգնած է «Նախճի Թափ» կոչուած բլուրը, որի գագաթին ու կողերին դեռ ևս կանգուն մնում են ու երևում, դարձեալ 1877 թուի պատերազմից մնացած հողէ պատնէշների ու մարտկոցների հետքերը:

«ձախ» գիւղից, արդէն մօտիկ հորիզոնի միջից պարզ երևում են Անիի վանքերը, մռայլ պարիսպներն ու աշտարակները: Այդ գիւղից դէպի արևելք— «Իւլյաթափալարների» լանջի վերայ, ձախ կողմում, զետեղուած է «Արագօղլու» կոչուած գիւղը. իսկ նրանից դէպի հարաւ, — «Ծաղ-հայտ» գլխին կանգնած է «Անի» անունով թուրքաբնակ աննշան գիւղը:»

Մենք այժմ «ձախ» գիւղից դուրս գալով, գնացքներս ուղղում ենք ուղիղ դէպի արևելեան հարաւ և մի փոքրիկ նեղ հովիտ անցնելով ընկնում ենք այն հարթ ու հաւասար

դաշտահովտի վերայ, որի մասին շատերը կարծում են, թէ Անիի շարունակութիւնը կամ քաղաքամասն է: Եւ արդարև, շատ հետքեր ու նշխարների մնացորդներ, ինչպէս «Հովուի» եկեղեցին և այլ նշմարք հաւաստիացնում և ապացուցանում են այդ կարծիքի ստույգ լինելը: որի հետ մենք ևս համամիտ ենք: Բացի այդ, երկրի երեսը ծածկող կաւէ խեցիների ու այլ և այլ առարկաների փշրանքներն ու ամբողջ տափարակ տարածութիւնը ծածկող փոշու հաստ շերտը և տեղ տեղ երևացող բարձր ու ցած գերբուկներն ու քարակոյտերը նոյն կարծիքն են հաստատում:

Այլ ու ձախ թողնելով յիշեալ Արագօղլու և թուրքաբնակ Անի գիւղերը, յիշեալ հարթավայրի վերայից, կառքը ուղիղ դէպի արևելք սահելով և Հովուի եկեղեցու մօտից անցնելով, մի քանի րոպէից յետոյ, դարձեալ գնում կանգնում է Անիի Աւագ դրան հանդէպ: Մենք այժմ ստիպուած ենք նորից դառնալ Ալէքսանդրապոլ, որպէս զի այնտեղից երրորդ ճանապարհով գանք Անի և այնուհետև Աւագ դռանից ներս մտնելով, սկսենք հետազօտութիւն անել այդ աւերակներում:

IV

ԵՐՐՈՐԳ ՄԱՆՈՎԱՐՆԵՐ:— Այս անգամ ճանապարհը շարունակվում է նախկին ճանապարհների բոլո-

րովին հակառակ ընթացքով և ուղղութեամբ: Այլքսանգրապօլից դուրս գալով և ուղիղ դէպի հարաւ շարունակելով ճանապարհը, Արփաչայի ձախ ափի ընթացքով, հասնումենք „Գահարլի“ գիւղը: Այդտեղից մի փոքր առաջ անցնելով, գնումենք „Բայխարլի“ գիւղը, որի աջ կողմում — Արփաչայի միւս ափին փոքր ինչ հեռու տարածութեան վերայ մնում են մեր վերև յիշած Արալը և Բաշ-Շորակեալ անուանուած գիւղերը:

Նոյն ուղղութեամբ և համարեա առանց գետի ընթացքից խոտորելու, ճանապարհը շարունակելով դէպի հարաւ, հասնում ենք „Բախարլի“ և անցնում „Տալշահալի“ գիւղերի մօտով „Արախարլի“ գետափնեայ մեծ գիւղին:

Այդտեղից ճանապարհը կամաց կամաց աննշմարելի կերպիւ խոտորելով դէպի հարաւ արևմուտք, դարձեալ գետի հոսանքի ընթացքով, հասնումենք, „Ահարլի“ գիւղը. որտեղից ճանապարհորդը տաժանելի աշխատանքով և վտանգ յանձն առնելով պիտի անցնի հանդարտագնաց Ախուրեան գետի աջ ափը, որ գնայ մեր վերև յիշած „Տալշար“ կոչուած աւանի յայտնի աւերակները և այնտեղից մեծահամբաւ „Հոռոմոսի“ վանքը (Աօշափանք):

Եթէ ճանապարհորդը այդ հունից կամ գետանցքից չուզենայ անցնել միւս ափը, ստիպուած պիտի լինի, դարձեալ դէպի հարաւ արև-

մուտք, մի փոքր առաջ գնալ և „Չրփլի“ գիւղի մօտից անցնել, ուր մեր նախնեաց մեծագործ շինութեանց մէկի կիսակործան նշխարների բեկորները դեռ ևս կանգուն են մնում ալեծուփ Ախուրեան գետի վերայ. այն է, «Չրփլի-ի Կամարլը», որի միայն տեսքը և կամարների հոյակապութիւնը ականատեսներին հիասթափեցնում է և յիշեցնում Բագրատունեաց աշխարհաշէն և մեծագործ յիշատակները:

Բայց թէ այստեղից և թէ նոյն իսկ „Աօշափան“ գիւղի մօտից անցնելը, առանց այլեւայլութեան նոյն դժուարութիւնն ու վտանգն են սպառնում ճանապարհորդին. որովհետև այդ տեղերից կառքով անցնելը բոլորովին անհնար է, քանի որ առապար ու անդնդախոր ժայռապատ ձորը կառք իջնելու կամ մտնելու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Մնում է միայն, որ դժուարագնաց շաւիղներով հասնել գետափը և լողալով կամ ձիով անցնել միւս հանդիպակաց կողմը. այդ էլ նոյնպէս խիստ դժուար է նրա համար, որ նախ՝ գետը այդ անձուկ և սեղմուած կիրճերում շատ խոր է, և երկրորդ՝ որ գետի ամբողջ յատակը լիքն է լպրծուն—(պլստան) մամռապատ մանր ու խոշոր քարերով. որոնց վերայ թէ մարդիկ և թէ կենդանիները ոտք դնելիս, իսկոյն սահում են և հաւասարակշռութիւնները կորցնելով մի կողմ սայթաքում ու խորասուզվում ջրի յատակը, որ-

1008  
35277



տեղից անվնաս դուրս գալը խիստ զժուարին է, կամ թէ բաղդի ժպտումն պէտքէ համարել մարդի երջանկութեան դէմ:

Մոռացայ իւր տեղում յիշել, որ այս ճանապարհը իւր ամբողջ երկարութեամբ մի կանգուն տեղ անգամ խճուղի չունի, այլ մէկ գիւղից միւսը գնալու սովորական ցեխոտ ու մասամբ քարոտ ճանապարհ է մինչև Անի հասնելը:

Վերջապէս վերև յիշած երեք հուններից, որ մէկից էլ որ մարդ հարկից ստիպուած անցնելու լինի, անշուշտ նախապէս պիտի գնայ „Ղօշավանք„ և ապա Ախուրեան գետի աջ եզերքով ճանապարհը ուղղելով դարձեալ դէպի հարաւ արևմուտք, դաշտավայրի միջով 5—6 վերստ ճանապարհ կտրելով, գնայ հասնի Անույ Աւագ դրանը: Բայց առաւել զուարճալի է և հետաքրքիր, որ Ղօշավանքից դուրս գալուց յետոյ, մարդ հետիոտ ճանապարհը շարունակէ գետի ընթացքով և ձորի միջով. որովհետև այնտեղ մի քանի մատուռներ, բազմաթիւ այրեր ու այլ տեսարաններ էլ աւելի կարող է տեսնել:

V

ՉՈՐԻՈՐԳ ԺՆՆԵՊԵՐՉ:— Ինչպէս իւր տեղում լիշեցի, այս ճանապարհը նոր է բացվում Ալէքսանդրապոլից Երևան տանող երկաթուղու գծի վերայ:

որ ըստ երևոյթին ամենից հեշտն ու յարմարն է. թէև զուրկ այն ամեն առաւելութիւններից ու քաղցր տպաւորութիւններից, ինչ որ կայ մեր արդէն նկարագրած նախկին ճանապարհների շուրջն ու վերան: Որովհետև ճանապարհորդը այնուհետև այլ ևս չի տեսնի, ոչ Միրակայ ընդարձակածաւալ դաշտը իւր շրջապատող մըթնոլորտի հետ միասին, ոչ մնացած հնութիւնների մնացորդները, ոչ լեռներն ու բլուրները, ոչ նրանց վերայ գտնուած պատերազմական դիրքերը և ոչ այլ ինչ: Այս ճանապարհի միակ յարմարութիւնը միայն մի քանի ժամ Անի շուտ հասնելու մէջն է կայանում:

Ալէքսանդրապոլից դուրս գալով, Արփաջայի ձախ եզերքից, կը հասնի առաջին կայարանը— „Աշխ“ գիւղը. իսկ այնտեղից կը գնայ „Բուշտաշխ“ երկրորդ կայարանը և Անիից 8—9 վերստ հեռաւորութեան վերայ կանգ կառնի. որտեղից ճանապարհորդը ձիով, սայլով կամ հետիոտ ճանապարհը ուղղելով դէպի արևմուտք և Ախուրեան գետն անցնելով՝ կը մտնի Անի: Կամ եթէ ցանկայ, այդտեղից նախ կարող է գնալ Ղօշավանք և ապա այնտեղից մեր յիշած գծով Անի:

VI

Որ ճանապարհով էլ թէկուզ գնալու լինինք, յարմարութիւնը պահանջում է, որ նախ մըրտ-

նենք „Ղօշավանք“ և ապա այնտեղից գնանք Անի ու միւս տեղերը:

Անիից 6—7 վերստ հեռու, մասամբ դէպի հիւսիս արևելք, Ախուրեան գետի աջ եզերքին, մի ժայռապատ թերակղզու վերայ գրուած է հայաբնակ խղձուկ Ղօշավանք գիւղը. որին համարեա կից, գետափնեայ ժայռի գագաթին հսկայակերպ կանգնած է „Հոռոհոի“ պատմական լիշատակներով լի պարսպապատ „Ս. Յովհաննէս“ անուանով վանքը, որի նուրբ ճարտարապետութիւնն ու քանդակագործ շքեղազարդութիւնը թողնում են ականատես այցելուին դիտելու և ըստ իւր հայեցողութեան դատելու:

Այցելուն այդ պարսպի արևմտեան կամարակապ մեծ դարբասից ներս մտնելուն պէս, աջ կողմի վերայ իսկոյն կը հանդիպի Վաչէ իշխանի և իւր տիկին Մամախաթունի Փրկչական 1229 թուականին կառուցած հոյակապ ու նրբաշէն „Նշխարահանը“. որին կից կան այլ ևս զանազան մեծութեան մեծ ու փոքր սիւնազարդ և քանդակագործ—սքանչելարուեստ 4—5 հատ ուրիշ շէնքեր, որոնցից ոմանք դահլիճներ, նախագաւթներ ու սրահներ են: Այդ դահլիճներից մէկը՝ շատերը մինչև այսօր ընդունում ու համարում են „Արհունի խորհրդարան“: Դրանցից դէպի արևելք, մեծ եկեղեցույ ժամատան հարաւային որմին կից գտնվում են նա և վեց հատ սրբա-

տաշ քարերից կառուցած անարձանագիր խցիկներ կամ մատուռներ, որոնք կարծվում են լինել նախարարների, իշխանների կամ աւագանուոյ, գերեզմանները:

Հոռոմոսի պերճափայլ վանքն ու մատուռները լաւ գննելուց ու համբուրելուց յետոյ, միևնոյն մեծ դռնով դուրս գանք և ուղղփկի մտնենք նրա առջև տարածուած փոքրադիր ձորակի, կամ լաւ է ասել ձորահովտի մէջ. որի կենդրոնում գրուած են „Ս. Գէորգ“ և „Ս. Մինաս“ գեղեցկաշէն ու վայելչադիր մատուռները, որոնց համար աւանդութիւնն ասում է, որ Բագրատունի թագակիրների շիրիմներն են: Սրանցից փոքր ինչ հեռու, դէպի հարաւ, երեք կարգ սևագոյն և հասարակ որձաքարից շինուած է Աշոտ ողորմած թագաւորի դամբարանը, բացօթեայ ու առանց մատրան և շքեղութեան: Չենք կարծում ու հաւատում, որ այս բարեհամբաւ ու արժանալիշատակ թագաւորի մահարձանը սկզբից այսքան վերին աստիճանի հասարակ և անհմուտ ձեռքով փորագրած, անթուական ու աղքատիկ „Աշոտ Թագաւոր Հայոց“ արձանագրութեամբ եղած լինէր. որը մեծահաջակ Բագրատունիք իրանց անուանը անվայել պէտքէ որ համարէին.... եթէ ժամանակի ընթացքում վայրագ ձեռքերը ընչաքաղցութեան բուռն տենչանքով պեղած, կրկտած և տապանաքարերը լափշտակած ու փոփոխած չը լինէին:

Ախուրեան գետը լեզու պիտի ունենար, որ մեզ պատմէր ու ասէր, թէ ինչ ու ինչ անցքեր են անցել վեհ մարդու այդ սրբացած լուռ ու անմուռնչ գերեզմանի հետ: Սրանց արևելեան կողմը, զառիվայր բարձրաւանդակի վերայ, արահետ ճանապարհի կշտին, դրուած կայ մկ փոքրիկ սագաշէն եկեղեցեակ՝ առանց զմբէթի, գուցէ սա ևս մի մեծ մարդի գերեզմանատեղի լինի: Այս արահետ ճանապարհից գնալով, վերոյիշեալ ձորակի հիւսիսային կողմի բարձրաւանդակի վերայ մենք կը հանդիպենք երկու զուգադիր զմբէթաւոր, միջակ մեծութեամբ աշտարակների, որոնք միմեանց հետ զուգորդուած—կապուած են մի կիսաբոլոր կամարով, որոնց զուգադիր լինելու պատճառաւ, ըստ թուրքական հնչման անուանել են „Խօշահ“. որից և ըստ ամենայն հաւանականութեան ծագել է բառս „Խօշավանք“ կամ „Ղօշավանք“: Այս աշտարակներին ոմանք շահաբաշահ են անուանել, ոմանք „Յաղլախան իսահար“ և ոմանք էլ „Իխաանոյ“ և այլն: Բայց բոլորն էլ ենթադրութիւններ են և վարկպարագի անուններ. ըստորում թէ պատմութիւնից, թէ արձանագրութիւններից և թէ աւանդութիւններից որոշակի ոչինչ բան չկայ դրանց ինչ լինելու մասին:

Սակայն, այսպէս թէ այնպէս, բոլոր հետքերից ու յայտնի նշաններից պարզ երևումէ, որ հռոմոսի վանքը Բագրատունի իշխողների տոհ-

մական գերեզմանատունն է եղել:

Այստեղից այժմ քայլերս ուղղենք դէպի հարաւ արևմուտք և բարձրաւանդակի վերայից, կամ գետեզրով գնանք հասնենք մեր տենչալի Անուոյ աւերակներին:

Ահա սրանով վերջացնում է մեր վերև յիշած չորս որոշ ուղղութեամբ Անի տանող ճանապարհներն ու զծերը: Կը մնայ այսուհետև ճանապարհորդին երկշարք պարիսպներից ներս տանել և մի առ մի ծանօթացնել աջ ու ձախ դրուած արդէն փոքր իշատէ գոյութիւն ունեցող թանկագին հնութեանց նշխարների հետ, որոնց իրարմէն անգամ իրանց համն ու հոտը և քաղցրութիւնն ունին:

## VII

Անի:— Անծանօթը լսելով այս անունը, գուցէ երևակայէ թէ այստեղ այցելելիս, կը գտնի մի շքեղ ու փառահեղ քաղաք, իւր անցեալ բոլոր փառքով ու շքեղ պերճութիւնով: Բայց, բացի մի քանի կիսակործան շէնքերից, կիսաւեր պարիսպներից, բուրգերից ու աշտարակներից և քարակոյտ գերբուկներից, էլ ուրիշ ոչինչ չի տեսնի ու գտնի այնտեղ:

Բայց նախքան ներս մտնելը, մեր ճանապարհորդը թող հաճի մեզ հետ գալ դէպի արևմուտք—„Ծաղկոցաձորի“, հիւսիսային եզերքը,

որտեղից սկսվում են գորշագոյն կարմիր պարիսպներին, աշտարակների ու բուրգերի միմեանց հիւսուած սկզբնաւորութիւնը և շարունակվում դէպի արևելք մինչև «Գլխձորը», որ պարիսպների հիւսիսային կողմից ձգվում է արևմուտքից արեւելք եւ հասնում ու խառնվում Ախուրեանի անդնդախոր ձորին ու այնտեղից շրջան կազմելով հիւսիսից հարաւ եւ կամաց կամաց կիսաշրջան ձեւ ստանալով, հասնում է հարաւ արեւմտեան ծայրը: Անփոփոխ նոյն դիրքով ու ձեւով յիշեալ ամրութիւնները, մէջ ընդ մէջ ընդհատուելով, շարունակվում են եւ «Ծաղկոցաձորի» կողմից ու հասնում վերոյիշեալ կէտին, եւ երկու հակառակ ուղղութեամբ դուրս ձորերը, մի պարանոցով գալիս կապվում ու խառնվում են միմեանց, որ Անին իւր ամբողջ տեղադրութեամբ մի եռանկիւնի թերակղզու ձեւ է ստանում, որի հարաւային եզերքի մօտ բարձրանում է Անիի մեծանուն «Միջնաբերդը»:

Աւշի ուշով, գննելով, թող այդ ամրութիւններից մակարերէ այցելուն մեր նախնեաց ճարտարապետական հմտութիւնն ու ռազմագիտական հայեացքը, եւ ըստ այնմ հետամուտ լինի մանրակրկիտ գննութեանց:

Իդէպ է ասել ու երկրորդել, որ Անույ այդ թերակղզին շրջապատում են արեւմուտքից «Ծաղկոցաձորը», արեւելեան հիւսիսից «Գլխ-

ձորը», եւ արեւելեան հարաւից «Ախուրեանի» ձորը, իսկ հիւսիսից մեր նախայիշատակեալ վիթխարի պարիսպներն ու աշտարակները, որոնք երկուստեք ձորերի ընթացքի հետ անընդհատ շարունակուելով՝ հասնում են Միջնաբերդի հանդէպ ու այնտեղ կտրվում—կանգ առնում:

VIII

Արտաքին պարիսպի կամարակապ «Աւագ» դուռը, որի աջ ու ձախ կողմերից հսկայակերպ շարիշար կանգնած են կիսակործան պարիսպները, քառակուսի բուրգերն ու կիսաբոլոր աշտարակները, այժմ մեզ ներս կընդունէ, յարգելի այցելու: Արեմն յառաջ խաղանք. բայց դռնից ներս մտնելիս՝ առաջին հայեացքդ ձգիր ուղիղ հանդէպը կանգնած ներքին պարսպի պատին եւ կրտեսնես, որ Բագրատունեաց հսկայ, կորովի ու ահռելի սուիւծը սեւ քարից քանդակած, խաշարձանի մօտից հանգարտ քեզ է դիտում:

Այժմ մի քանի քայլ ճանապարհդ ուղղէ դէպի արեւելք եւ ներքին պարսպի խարխալեալ դռնից ներս մտիւր, որին կից աջ ու ձախ կողմից երկու հսկայ աշտարակ, արթուն պահապանի նման դեռ կանգնած են: Ահա այդտեղից ամբողջ Անին աչքիդ առաջ փռուած ու տարածուած է:

Այդ դուռն ուղիղ կեդրոն ընդունելով, մենք Անին ծայրէ իծայր—հիւսիսից հարաւ կը բաժա-

նենք երկու մասի—աջ ու ձախ—մինչեւ Միջնաբերդին հասնելը, եւ այցելուին կառաջնորդենք տեսնելու արդէն փոքր իշատէ գոյութիւն ունեցող կիսականգուն շէնքերը:

Նախ՝ մեր կանգնած տեղից մի քանի սաժէն ուղիղ գծով աւաջ գնալով, մենք կը հանդիպինք քաղաքի կեդրոնում „Մէծ“ կամ ութնանկիւնի „Միջնաշտարակի“—1881 թուին ահեղ երկրաշարժից կործանուած բեկորներին:

Այժմ դառնանք ու մեր գննութիւնները սկսենք աջ՝ այսինքն արեւմտեան կողմից—Ծաղկոցաձորի գլխից սկսուող պարիսպներից—դէպի հարաւ: Հէնց ձորի գլխից, համարեա պարիսպներին կից, ուղիղ Ծաղկոցաձորի ճիշդ եղերքին դրուած առաջին շէնքը „Պահլա-ու-նէայ“ հրաշակերտ պալատն է, որի խաչաձեւ գոյնզգոյն Մողալիքը, տեսնողին դեռ հիացնում են ու ասուշ կացնում:—Նորա հանդէպ, մի փոքր դէպի հիւսիս, գտնվում է մի զօրանոց, կամ „Թիշնապահայ“ տունը—ըստ Բրօսսէի: Նոյն Ծաղկոցաձորի գլխին մինչեւ այսօր բարձր ի գլուխ եւ վեհաբար կանգնած է „Ապու-ղաճիէնց Ս. Գրիգոր“ եկեղեցին: Ապա մի 80—90 քայլ յառաջ գնալով տեսնում ենք „Առաքելոյ“ եկեղեցւոյ մնացորդները: Այնուհետեւ կայ և մի ուրիշ անյայտ ու անանուն եկեղեցու բեկորներ:—Արեւմտեան կամ աջ կողմի վերայ գտնուած աչքի ընկնող շինութեանց մնա-

ցորդները՝ ահա սրանք են մեծարգոյ ընթերցող:

Հիմա դարձեալ Միջնաշտարակի մօտից սկսենք մեր գննութիւնները: Այդ աշտարակից դէպի արեւելք—Գլխձորի եւ Ախուրեանի եղերքի մօտ գտնվում է Ս. Փրիկէ՝ բոլորշի եկեղեցին: Իսկ սրանից դէպի հարաւ հսկայակերպ կանգնած է Սմբատի հիմնարկած եւ Կատրամիտէ թագուհու աւարտ հասուցած սքանչելակերտ ու հոյակապ «Կաթուղիէնց Մայր եկեղեցին», որի բարձրաբերձ ձեղունի ու կամարների տակից կարծես դեռ եւս ականջիդ են հասնում «Օրհնութեանց» եւ հողեւոր երգերի հոգեպարար ձայներն ու եղանակները: Նա եւ սրանից ուղիղ գծով դէպի հարաւ երեւում են „Արտանի Բաղանիսի“ մնացորդները: Իսկ վերջնիցս, դարձեալ դէպի հարաւ, ուղիղ Ախուրեան գետի բարձրաւանդակի վերայ, քաղաքի մակերեւոյթից բաւականին ցած դրուութեամբ, մի փոսորակի մէջ, նազելի դիրքով կանգնած է, իւր առաջև ձգուած ժամատան հետ միասին, քանդակագործ „Ս. Լուսուորիչ“ (Նախշի) եկեղեցին: Սրանից դէպի հարաւ արեւմտեան կողմը, միջնաբերդի արեւելեան անկիւնում, Ախուրեանի ձորափին դրուած է կամարակապ զարմանակերտ „Կաթուղիէնաբանք“ կամ ըստ ոմանց „Մշիկէլ“ և կամ „Անանուհի պալատ“, իրան կից մի դեղնագոյն քարերից կառուցած բարձր աշտարակի հետ:

Միջնաբերդի.— Ընդհանրապէս ամբողջ Անիի եւ նրան շրջապատող վայրերին իւր բարձրութիւնից իշխող միջնաբերդի վերայ այժմ կան մի քանի սենեակների ու որմերի հիմքեր, եւ արեւելեան կողմում համարեա զեռ կանգուն, մի մեծ նախագաւիթ, կամարակապ գետնափոր նկուղներ եւ մի քանի ուրիշ շինութեանց հետքեր, որոնք մէկը միւսի հետ կապուած—հիւսուած են եւ հաւանօրէն կարծել են տալիս, որ յիշեալ նախագաւիթի մասերն են: Նոյն աւերակների հիւսիս արեւմտեան եզրում զեռ եւս կամարակապ մի գեղեցիկ քանդակած դռնով կանգնած կայ նա եւ մի ուրիշ մեծ շինութեան աւերակ, որ ըստ ոմանց «Թագաւորազն մանուկների գերեզմանատունը» պէտքէ լինի: Բայց եւ այնպէս այդ շէնքերը իրանց տարրորջ ձեւով, քանդակուած զարդերով ու աւելի հնութեան նմուշ կրելով, բոլորովին տարբերվում են միւս շէնքերից. որոնց բարձր ու ցած որմերն ու փառահեղ կերտուածքը, միանգամայն կարծել են տալիս, որ դրանք մի իշխանական ապարանքի մնացորդներ պէտքէ լինին: Եւ հաւանականութիւնից հեռու չէ կարծել կամ ենթադրել, որ Աւուոյ նախկին տէրէրի—Կամարականների պալատները լինին. ըստ որում, որքան պատմութիւնից յայտնի է, նրանք իրանց նախնական բնակութիւնը հաստատեցին Անիի միջնաբերդում ու այնտեղ ապ-

րեցան:— Բացի այս, նոյն միջնաբերդի արեւելեան լանջի վերայ կայ մի կիսաւեր փոքրիկ եկեղեցի: Նմանապէս մի փոքրիկ մատուռ էլ կայ նրա հարաւային զաւիվայրի վերայ: Սրանցից զատ Անիի միջնաբերդում ուրիշ աչքի ընկնող շէնքեր այլ եւս չկան:

Միջնաբերդի հարաւային ծայրում, պարանոցից անջատ, Ախուրեանի աջ ափին, կայ մի անմատչելի քարաբլուր, որի վերայ, ըստ ռամկի ասածին, գտնվում է „Աղշալսի“, որ նշանակում է աղջկայ բերդ. բայց իսկապէս այդտեղ բերդի ոչ մի հետք ու նշան չկայ. բացի զեղնագոյն կարմիր քարից միջակ մեծութեամբ շինած մի եկեղեցուց եւ իւր շուրջը ցիրուցան ընկած բազմաթիւ խցիկների աւերակներից: Այդ քարաբլուրը անմատչելի անուշով կնքեցինք, բայց սխալուած չենք. որովհետեւ վերան բարձրանալու երեք ճանապարհ ունի, միայն թէ մէկը միւսից վատ: Առաջին ճանապարհը Ախուրեան գետի աջ ափից, համարեա «Նախշի» եկեղեցույ մօտից է սկսվում եւ 20—25 ըրպէ գնալով, հարաւ արեւելեան կողմի քարաժայռից մագլցելով վեր է բարձրանում: Երկրորդը Ծաղկոցաձորի միջից է սկսվում, որ ափափայ եւ խորդուբորդ քարաժայռեր վերելակելով, համարեա առաջին ճանապարհի չափ տեւողութեամբ, դժուարատար աշխատանքով հազիւ կարելի է բարձրանալ գագաթը: Իսկ եր-

րորդը ուղիղ միջնաբերդի հանդէպից է սկսվում.  
 Թէպէտ կարճ, բայց ամենադժուար եւ վտան-  
 գաւոր ու երկիւղալի ճանապարհն է, որտեղից  
 բարձրանալու համար, մարդ պէտքէ կատուի  
 ճարպիկութիւն ու դիւրաթեքութիւն ունենայ:  
 Ուրեմն այսպէս թէ այնպէս, լաւ է վճռել նախ-  
 կին երկու ճանապարհների մէկնումէկից գնալ—  
 վեր բարձրանալ, քան թէ այս վերջինից, որ ամեն  
 բոսկէ վտանգը եւ մահն ու կեանքը մարդի աչքի  
 առաջին թրթռում է:

Այժմ մի փոքր էլ ուշք դարձնենք ստոր-  
 երկրեայ Անին մտնելու անցքերի վերայ:— Որքան  
 գոյութիւն ունեցող նշաններից ու հետքերից  
 մեզ երեւում է, այդտեղ մտնելու համար, առ  
 այժմ—ըստ երեւոյթին—երեք որոշ անցք կամ  
 մուտք կայ, որոնց աամիկ ժողովուրդը «Գէգան  
 գէալմալ» անունն է տուել: Սրանցից մէկը Ծաղ-  
 կոցաձորի միջից է, այն է միջնաբերդի հիւսիս  
 արեւմտեան իսկ երկուսը Ախուրեան ձորի կող-  
 մից է: Այս վերջիններից մէկն արդէն իսպառ  
 խցուած—ծածկուած է, միայն մուտքի բերանն  
 է յայտնի. իսկ միւսը որ բանուկ եւ գործածա-  
 կան մուտքն է, գտնվում է Ս Լուսաւորիչ  
 (նախշի) եկեղեցւոյ տակը—Ախուրեանի եզեր-  
 քին:—Սրանցից մի քանի սաժէն հեռու գտնվում  
 է Ախուրեան գետի վերայ կառուցած կամուրջի  
 հետքերը, որի միայն կիսափուլ աջ թեւը գեռ

ևս երերուն ու կանգուն կայ առ այժմ:

Բայց դեռ Անիից դուրս չը գնացած, մի հայ  
 եացք էլ ձգենք նրա շուրջը գտնուած Ախուր-  
 եանի ու Ծաղկոցաձորի վերայ եւ քալ առ քալ  
 մանգալով տեսնենք թէ այնտեղրանք ինչ կայ:

Ծաղկոցաձորի մէջ այժմ մեծ ու փոքր, տա-  
 բեր ձեւերով, երկու, երեք եւ աւելի յարկանի  
 հարիւրաւոր ու հազարաւոր այրեր կան, որոնք  
 ինչպէս նկատվում է, ըստ իւրեանց յարմարու-  
 թեան, ծառայել են կրպակների, բնակարանների,  
 գոմերի և գերեզմանների տեղ. որոնց վերայ  
 գործածած փայտեղէնները, դարերի ընթացքում,  
 այժմ իսպառ քարացած շիկագոյն գոյն են ստա-  
 ցել: Միւսնոյն այրերից հարիւրաւորները կը տես-  
 նենք նաև Ղօշավանքի ձորի գլխից սկսած մին-  
 չև Անիին հասնելը, Ախուրեան գետի աջ եզեր-  
 քին գտնուած քարաժառերի մէջ, որոնք Անիի  
 մօտերքն աւելի խտանում ու բազմանում են:  
 Թող շատերը չը կարծեն թէ, այդ այրերը իս-  
 կզբանէ բնութեան ստեղծագործած խղճուկ ծեր-  
 պեր են. ո՛չ, այլ մարդկային ձեռքերն ու հան-  
 ճարն են ստեղծել—գոյացրել դրանց, մարդու—  
 իրան պիտանաւորութեան համար:

Ահա սրանով ամփոփվում ու վերջանում է  
 Անիի աջ ու ձախ կողմերում գտնուած և փոքր  
 իշատէ կանգուն մնացած շինութեանց մնա-  
 ցորդները: Բացի մեր վերև յիշածներից, Անիում

այլ ևս ոչ մի ուրիշ աչքի ընկնող հնութեանց հետք չկայ, ինչպէս իւր տեղում ասել ենք, բացի դերբուկներից ու քարակոյտերից. այնպէս որ այցելուն այսուհետև իզուր պէտքէ որոնէ մի նոր բան գտնելու կամ տեսնելու համար Անիում:

IX

Այժմ կրկին Անիի Աւագ դռնով դուրս գանք և հիւսիսային կողմի դաշտի վերայով քայլերս ուղղենք դէպի արևմուտք ու թուրքաբնակ Անի գիւղի մօտից անցնելով, և մի ժամու ճանապարհ ուղիղ գծով կտրելով, գնանք հասնենք «Ալաճա» լեռան արևելեան կուրծքին դրուած «Բագնայր» (Ղոզլիճայ) թուրքաբնակ գիւղը, ուր մեր նախնեաց իշատակներից, դեռ ևս կանգուն 5—6 հատ եկեղեցւոյ և մատրանց, բազմաթիւ արձանադրութեամբ, իշատակներ կան մնացած, որոնց վերայ անքուն արթնութեամբ տակաւին հսկում է Ալաճայի գագաթի պատառուածքի մէջ գտնուած «Գարսնիլի Ղալա» (Մթին բերդ) հնուց մնացած լքեալ ամրոցը:

Այդ սքանչելի դիրք ունեցող թուրքաբնակ Ղոզլիճա գիւղը, երբեմին մեր նախնեաց հրուշակուած շէն ու փառաւոր աւաններից, կամ թէ աւելորդ չէ հաւանորէն կարծել, որ Անիի արուարձաններից մէկը եղած լինի. և կամ նա-

խարարներից կամ մեծ իշխաններից մէկի դաստակերտ ամարանոցը: Իսկ այժմ այդ բոլորի փոխանակ երևում են միայն մի քանի խարխուլ ու անմաքուր խրճիթներ, և վերև լիշուած տըխուր սրբարանները փոխարկուած են մառանների ու մարագների:

X

Դուրս գալով այդ տխուր բնակավայրից, քայլերս ուղղենք զառիվայր-դէպի հարաւ արևելք և դաշտավայրի վերայ կարկառած «Թամասի չափների» մօտից, ընդ ամենն հազիւ 3—4 վերստ անցնելով, գնանք կանգնենք «Մաշաբէրդի» արևմտեան մեծ դրան հանգէպ:

Ինչպէս Անին, նոյնպէս և Մաղասբերդը շրջապատուած է Ախուրեան գետի օձապտոյտ հոսանքով և երեք կողմից անդնդախոր միակտուր ժայռերով, որոնք ահաւոր տեսք ունին և տեսնողի վերայ սարսափ են բերում իրանց մռայլապատ դէմքով:

Եթէ հարաւ արևմտեան կողմից Ախուրեան և Ծաղկոցաձորերի միացմամբ Անիի միջնաբերդը անջատուած ու բաժանուած չը լինէր Մաղասբերդի ցամաքակղզուց, առանց երկմտելու և տարակուսանքի, անշուշտ Մաղասբերդը Անիի արուարձանը, կամ նրա առանձին ամրութիւններից մէկը պէտքէ համարէինք: Չը նայելով, որ ըստ



աւանդական պատմութեան, սրա հիմնարկէքը մի քանի դար առաջ է եղել, քան թէ Անիինը:

Մաղասբերդն էլ Անիի նման մի թերակղզի է, միայն արևմտեան և մասամբ միւս կողմերից շրջապատուած երկկարգ պարիսպներով: Ուրեմն, թէ տեղագրական դիրքով, թէ պարիսպներով ու բուրգերով և թէ աշտարակների ու այլ և այլ շինութեանց նմանողութեամբ, Մաղասբերդը մեծ մասամբ նման է Անիին, միայն այն զանազանութեամբ, որ առաջինը (Մաղասբերդը) աւելի ամրապինդ ու անառիկ դիրք ունի, քան թէ Անին:

Եթէ ուղիղ գիծ կամ ճանապարհ ունենար Անիից Մաղասբերդ գնալու, հազիւ թէ առ առաւելն կէս ժամ տևէր այդ տարածութիւնը, այն ինչ այժմ ուղիղ գծից—կառքով 5—6 վերստ—ոլորտապտոյտ ճանապարհ կտրելով ու շրջան տալով, հազիւ կարող է մարդ հասնել Մաղասբերդի վերոյիշեալ մեծ դրանը: Իսկ հետիոտ գնալու համար ամենայարմար և կարճ ճանապարհն է, հազիւ երկու վերստ տևողութեամբ, Անիի միջնաբերդի մօտից իջնել Ծաղկոցաձորը և վերջինիս գէպի արևմուտք ձգուող ճիւղի միջից առանց մեծ դժուարութեան գնալ հասնել վերոյիշեալ դրանը:

Մաղասբերդ մտնողն էլ նոյնպէս կը տեսնի նոյն կիսափուր—կիսականգուն ու քայքայուած

և գետնի հետ հաւասարած իշխանական ապարանքների, վանքերի, աշտարակների, պարիսպների, մեծամեծաց ու հասարակաց տների և այլ հազար ու մի յափշտակեցուցիչ ու զմայլեցուցիչ շինուածքների նշխարներ, բեկորներ, հետքեր ու բարձրագիւր քարակոյտ և մոխրապատ դերբուկներ, ինչ որ Անիում կան. ուրիշ ոչինչ:



*Հրեմիս*





201

Հայաստանի Ազգային գրադարան



NL0429375

Հեղինակի մօտ միանալուս եւն նաեւ իւր արդեւն  
յոյս սեամ նեւեւեալ երկասիրութիւնները —

1. Տաղեր ու Խաղեր — Հարուստ ժողովածու եր-  
գերի — չորս ըստանմունքով . . . „ — 60 կ.

2. Փշրանքներ Շիրակի ամբարներէց — Էմինեան աղ-  
գազրական ժողովածու (սակաւաթիւ) . 1 ր. —

Գահար Միրզի և Զօհրա խանումի հեքեաթը —  
հայերէն և թուրքերէն երգերով . . . 30 կ.



Գիմեւ — Александрополь

Александрю Мхитаряницъ.

Կամ

Типографія А. М. Малхасянца.